ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N 957

«24» հունիս 2024թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք
Մարտունի,Շահումյան փողոց 2
☎ 060743401
☎ էլ.փոստ՝ info@martuni.am

«Կիմա Խաչատրյան» ԱՁ -ի
տնօրեն
Տիկին Կ. Խաչատրյանին

ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի և «Կիմա Խաչատրյան» ԱՁ -ի միջև 12.12.2023թ. կնքված N ԳՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-23/04-2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և 02.02.2024թ. պայմանագրին կից կնքված №1 համաձայնագրի (այսուհետև՝ համաձայնագիր) շրջանակներում «Կիմա Խաչատրյան» ԱՁ-ն Մարտունու համայնքապետարանի կարիքների համար պետք է մատակարարեր, (բայց ոչ ուշ մինչև 01.06.2024թ.) Դաշնամուր 7 հատ, Ամբիոն 8 հատ, խոսափողի հենակ 9 հատ, խոսափող 10 հատ, կենցաղային երկկողմանի աստիճան 8 հատ, հայելի 8 հատ, Շերտավարագույր 342 քմ. , նարդի 40 հատ, շախմատ 30 հատ, Սեղանի թենիս 4 հատ, Թանգարանային դարակաշար 4 հատ, Ցուցասեղան ապակիով 2 հատ, Թանգարանային պատվանդան 4 հատ , Ցուցասեղան 2 հատ , Դարակաշար 1 հատ սակայն «Կիմա Խաչատրյան» ԱՁ -ի կողմից օրենքով սահմանված ժամկետում վերոնշյալ ապրանքները չեն մատակարարվել :

Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.1 կետը (Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) և 2.1.7 կետը (Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը)՝ Մարտունու համայնքապետարանը 2024թ. հունիսի 24-ին միակողմանի լրիվ լուծել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Կիմա Խաչատրյան» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետարան 900145001484 հաշվեհամարին փոխանցել 44 790 (քառասունչորս հազար յոթ հարյուր իննսուն) ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագիր 6.2 կետի համաձայն), տույժը հաշվարկված է մինչև 24.06.2024թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվը առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է 941 500 (ինն հարյուր քառասունմեկ հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 1 412 000 (մեկ միլիոն չորս հարյուր տասներկու հազար) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900145001484 Հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. Հուլիսի 1-ը ներառյալ «Կիմա Խաչատրյան» ԱՁ-ի կողմից վճարվի վերը նշված 941 500 ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և 1 412 000 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Կիմա Խաչատրյան» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (հրավեր 8.14 կետի 2-րդ պարբերություն /սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին/): Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2024թ. հուլիսի 1-ը ներառյալ ներկայացնել Մարտունու համայնքապետարանի գնումների բաժին:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Հ. Հովեյան

Կատարող՝ Ա.Գրիգորյան
Բաժին՝ Գնումների բաժին
Հեռ. 094334245